



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան N

«3» մայիս 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 141-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 638-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՎ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 7)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 638-Ա/2 հրամանով հաստատված կարգով իրականացվող 2024 թվականի ընթացքում մշտադիտարկման ենթակա ծրագրերի և թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետի հավելվածով հաստատված ծրագրերի և թեմաների մշտադիտարկման իրականացման ժամկետ սահմանել ս/թ. մայիսի 30-ից մինչև սեպտեմբերի 20-ը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

2024 թվականի ընթացքում մշտադիտարկման ենթակա ծրագրերի և թեմաների ցանկը

h/h	Կազմակերպություն	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների անվանում	Ծրագրի ծածկագիր	Ծրագրի/թեմայի Վերնագիր	Ծրագրի/թեմայի Ղեկավար
1.	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Նպատակային-ծրագրային հետազոտություն		ՀՀ ԳԱԱ ՄԿԻ ՊՈԱԿ-ի «Հայկական գենոֆոնդի կայունության գործոնները» ծրագրին պետական աջակցություն	Առաքելյան Արսեն Արտաշեսի
2.	«Ա. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Նպատակային-ծրագրային հետազոտություն		«Կիրառական (կոմերցիոն) նշանակության տիտանի հիմքով համաձուլվածքների սինթեզը Հիդրիդային ցիկլի եղանակով» ծրագրին պետական աջակցություն	Մինասյան Սեյրան Հենրիկի
3.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24NPUA-CON-I-2B	Գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների կենտրոնի պահպանում և զարգացում	Վարդանյան Գոռ Պատվականի
4.	«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24AANL-CON-I-1C	«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և գիտական ներուժի արդիականացում	Քառյան Գևորգ Արարատի
5.	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24IGS-CON-I-1E	Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման ռանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը	Մելիքսեթյան Խաչատուր Բորիսի
6.	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24IOS-CON-I-6A	«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիր	Հարությունյան Լիլիթ Միշայի

7.	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24INSTBOT-CON-I-1F	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները	Գասպարյան Արսեն Հակոբի
8.	ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	24INSTLIT-CON-I-6B	«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն»	Որսկանյան Հերիքնազ Վանիկի
9.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	21AG-2B011	Պերովսկիտ-սիլիցիում երկանցումային արևային տարրերի մշակում	Այվազյան Գագիկ Երջանիկի
10.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	22ri-048	Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևութային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ՝ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար	Զադոյան Օվսաննա Աշոտի
11.	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	22ri-037	Կոլլալոերային գիտափորձերի համար բարձր ճշտության ժամանակային դետեկտորների մշակումը և Հիգգսի բոզոնային զույգերի որոնումը CMS (LHC) գիտափորձում	Թումասյան Արմեն Ռաֆիկի
12.	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	22IRF-08	Հայաստանի կարևոր (ռազմավարական) միներալների ներուժի գնահատումը՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության համար էկոլոգիապես կայուն արտադրության նպատակով	Հովակիմյան Սամվել Էդվարդի
13.	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	23RL-1E042	Տեֆրոխորոնոլոգիա և Հայաստանում հրաբխային մոխրի թափման վտանգը	Գրիգորյան Էդմոնդ Սպարտակի
14.	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	21T-6A153	Քրդական գործոնի աշխարհաքաղաքական կարևորությունը սիրիական ճգնաժամում	Հարությունյան Լիլիթ Միշայի
15.	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	21AG-1F004	Ինվազիվ ռուպտիկաները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար	Ֆայվուշ Գեորգի Մարկի
16.	ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն	22YR-6B039	Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան	Սարգսյան Նառա Ղարիբի